ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 135

« 16 » ՄԱՅԻՍ 2025Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 15 հոդվածի ա, դ և զ կետերով և Հայաստանի հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46 որոշման հավելված 2-ի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 399-Ա որոշման «ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025թ. հիմնական միջոցառումների» պլանի Վայոց ձորի մարզում անցկացվող միջոցառումների 3.1 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2025 թվականի հունիսի 11-ին Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Հրդեհաշիջման, որոնողափրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի խոհանոցում գազի պայթյունից մասնակի փլուզված մասնաշենքում» թեմայով:

1. Նշանակել՝

1) ուսումնավարժության ղեկավար, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանին

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, փ/ծ մայոր Ս. Թադևոսյանին

3. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով՝

1) խաղարկման խումբ

ա. խմբի ղեկավար, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության Վայքի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փ/ծ ավագ լեյտենանտ Կ. Ավագյան

բ. խմբի անդամ, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության Վայքի հրշեջ փրկարարական ջոկատի հերթափոխի պետ, փ/ծ ենթասպա Հ. Եփրեմյան

2) վերլուծության նախապատրաստման խումբ

ա. խմբի ղեկավար, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Ժ. Սարգսյան

բ. խմբի անդամ, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Ն. Մկրտչյան

4. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությանը

2) «Լիդեր Կոմպլեքս» ՍՊԸ-ի անձնակազմը

3) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Վայոց ձոր» ԳԳՄ Վայքի տարածքային տեղամասը

4) ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վայքի բաժնի ծառայողները

5) «ՀԵՑ» ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղի «Վայքի» տեղամասի աշխատակիցները

6) Վայքի շտապ օգնության ծառայության աշխատակիցները

7) ԿԽԸ Վայոց ձորի մարզի մասնաճյուղի արագ արձագանքման թիմը

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Ս. Թադևոսյանին

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2025թ. մայիսի 16-ը ներկայացնել հաստատման:

2) ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ ուսումնավարժության անցկացման հարցերով.

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները գույքով, սարքավորումներով և տեխնիկայով

2) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ

3) ուսումնավարժության ընթացքում պառպասել ասպտասգության կասոսսերր պահանջների կատարումը

4) պատրաստ լինել ուսումնավարժության ղեկավարին զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ուսումնավարժության ղեկավար, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանի վրա:

8. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր